ներ, Սեդրաք Հրաչեան՝ կազմարար եւ տպագրիչ, Իլիաս Ապոբլմէլէք (ղպտի) ե-բուսազէմացի, Գալուստ Իսպիրեան Սիւ-րիհարցի՝ կազմարարներ, Պետրոս Պետ-բոսեան Ուրֆացի՝ օգնական կազմարար։

* * *

Որքան կը ներէր յօդուածի մը սահ-մանը, աշխատեցանք ամփոփ գիծերու մէջ խտացնել Սրբոց Յակոբեանց տպարանի հա-բիւր տարուան պատմութիւնը, զոր կը փա-կենք հոս՝ մաղթելով որ օրըստօրէ ծաղկի ու բարգաւաճի ան և լրում տայ ազգին բաղձանքներուն և ակնկալութեանց։

Ուրախալի և մխիթարական է արդա-բև որ սկսած են երևան գալ արդէն նորա-նոր պատեհութիւններ, զորս գիտէ քաջա-պէս օգտագործել արդի գրասէր և գրագէտ գահակալը Սուրբ Աթոռոյս, որուն կը վի-ճակուի տպարանիս երկրորդ հարիւրամեա-կի սեմէն մտնել ներս։ Միրելի է մեզ յու-սալ թէ Նորին Ամենապատուութիւնը, Մի-աբանութեան բարի եռանդն ու տրամադը-բութիւնները և գովելի ջանասիրութիւնը ունենալով իրեն օժանդակ, բեղուն ու փայ-լուն տպագրական երկրորդ դարաշրջան մը պիտի բանայ Սուրբ Աթոռոյս մէջ ու պիտի թողու անուն մը յաւէտ անմոռանալի՝ նման երջանկայիշատակ և բազմերախտ իր նա-խորդներուն։

ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆ

ԱՂՕԹՔ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Տառը տա՛ր լոյսին մէջ. հնչեցո՛ւր երգի պէս,
Թո՛ղ սեւցած մեռաղին դառնայ փայլը վրնիս.
Մասնէ մաս սահեցու՛ր խորհուրդի մարգարիս,
Թո՛ղ մասեանը բացուի ջերմաւէս իմ շունչէս։

Պանծացո՛ւր գաղափարը մութէն անցեալին,
Ո՞վ Աստուածը լուսեան, ծնծղաներ փոթորկէ,
Ի՞նչ պարտէզ էր առկախ երկինքէն արծաթէ,
Երբ ձեռքերը սիրոյ աղօթքով ձոյլ էին...

Սիրտէ սիրտ կը հծծեն շրթունքները քարէ.
Ու դէմքեր կը բացուին ու բիբեր կ'երազեն.
Արեւին օրհնութիւնն իր բուրվառը կ'այրէ...

Տո՛ւր բառեր դիւթանքի որ օծուած են լոյսէն,
Ու թո՛ղ երգը հիւսուի աստղերու բոցին հետ
Գիշերի՛ն, Պաշտումին, Աղօթքի՛ն կրկնաւէս...։

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

digitised by A.R.A.R.@